

Վարդ ամպն եղիր՝ մերթ լուսինկան պատմուճանող,  
 Դո՛ւն, աստուածեան գեղեցկութեան արփաւո՛ր հարս,  
 Սրբութեան կո՛յսը ձիւնաձիր ու հըրավարս:  
 Գիշերին մէջ կ'իջնէ դեռ ուղիսը լուսեղէն,  
 Կաթիլ մը կաթ՝ ծովացած քու սրբութենէն.  
 Ու տե՛ս, ահա՛, կը մանկանամ, Աստուածամար,  
 Ու տե՛ս, ահա կը մանկանա՛մ գիշերին մէջ՝  
 Ուր լըսեցի ես աստուածեան ձայնին վայրէջ՝  
 Որ կը շաչեր աստուածարեալ հոգւոյս համար:

## 9. ԱՌՆՉՈՒԹԻՒՆ

Այսօր կաթվարդ երազէ մը արթնցայ,  
 Գիրկս անսահման գրգանքներու է բացուեր.  
 Այսօր, Յոգի՛ս, պիտի բերեն քեզ ընծայ՝  
 Նոր տարփանքիս թիթեռնիկին հիր թելեր:

Այսօր իղձով իմ հոգիս է կաթոզներ.  
 Ու վարդի պէս կը բացուի սիրտս իբր ընծայ  
 Այն լուսոռոգ պատարագին սրբանուէր՝  
 Չոր ծափեցին իմ երազներըս ծնծղայ:

Երէկ գիշեր իմ հոգիս էր ինկած, ա՛,  
 Թաւիշին մէջ կախօրրանին ոսկելոյս՝  
 Չոր ճօճեցին մինչեւ առտու, մինչեւ Յո՛յս,  
 Ըղձանոյշներն իմ Տենչանքիս նախընծայ:

Այսօր լոյսի ծովի մը մէջ արթնցայ,  
 Գիրկս անհամար գգուանքներու է բացուեր.  
 Այսօր, Յոգի՛ս, պիտի բերեն քեզ ընծայ՝  
 Մանուկ բոյրեր եւ աղջըկան պէս հովեր:

Մանուկ բոյրեր եւ աղջըկան պէս հովե՛ր՝  
 Որոնց շուրթերն էին փնտռեր ընդերկար,  
 Ու գրկանքին խանդաղատ գիրկս էր բացուեր.  
 Երանութի՛ւն, լոյս թոպէին մէջ երկա՛ր...

Եկո՛ւր, անցնինք ծառաստանէն այս Լոյսին,  
 Ու բացատքէն Գոյնին, Ձեւին ու Բոյրին.